

9254

891.99

2-43

1893

1.542-3

9-43

22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԲՆԱԿԱՆԱԿԱՆ

№ 1

ԱԼ ԶԱԳԱՐԱԿԱՆ

ՇԻՐԱԿԱՆԻ ԿՈՅՍԸ

Փողոտորոտական առևտրային

Արտատվ. „Արձագանք“ շաբաթ.



Թ. Ի. Ֆ. Լ. Ի. Ս.

Տպարան Մ. Շարաձե, Նիկ. փ. ա. 21

Типография М. Шарадзе, Никол. ул., 21

1893

Հանձնարար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՅԱԿԱՆ



2003

891.542-3
2-43

*Իրեն Եր. Կարապետյանի
Հ. Կարապետյանի*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՅԱԿԱՆ

50 № 1 22

Ա. ԶԱԿԱՐԻԱՆ

ԵՐԿԱՆԻ ԿՈՅԱԿԱՆ

Փողոցային առևտրի թիվ

55652

Արտատպ. «Արձագանք» շաբաթ. 1888



Թ. Գ. Լ. Ի.

Տպարան Մ. Շարաձե, Նիկ. փ. ա. 21

Типография М. Шарадзе, Никол. ул., 21
1893

2289

Дозв. цензурою, Тифлисъ, 13-го Января 1893 г.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՅՈՒՂԱԲԵՐ

ՍԵՐՈՐՅԱՆ - ԻՆՃԻԿՅԱՆԻ

Ի 23-Ն ՀՈՒՆՎԱՐԻ 1929 Թ.

ԹԻՖԼԻՍ

Այս գրքից կ'է պատճառով
Այր. Զոհրաբեկ
Ի ՅԻՇԱՏԱԿ
ՍԵՐՈՐՅԱՆ - ԻՆՃԻԿՅԱՆԻ
23 ՀՈՒՆՎԱՐԻ 1929 ԹՈՒՆԻ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԳ

Հրատարակելով ներկայ գրքոյկը թողտուռ-
թեամբ Մեծ. պ. Ալէքսանդր Զաքարեանցի, աւե-
լորդ չենք համարում մի քանի խօսք ասել սորա
առթիւ: Դ՛ վաղուց հետէ նպատակ դնելով ար-
ժան հրատարակութիւններ լոյս ընծայելու, դի-
մեցինք «Արձագանք»-ի խմբագրութեան արժ. Գիւտ
քահանայ Աղանեանցի միջնորդութեամբ, խնդրե-
լով՝ որ թող տայ մեզ արտատպել և առանձին
գրքոյկներով հրատարակել «Արձագանք»-ի 1881
— 1893 թ. համարներում լոյս տեսած գեղեցիկ
վէպիկներ, ինքնուրոյն կեանքից վերցրած պատ-
կերներ, զանազան նշանաւոր անձանց կենսագրու-
թիւններ, ճանապարհորդութիւններ և այլն, և
մատչելի դնելով տարածել մեր հասարակութեան
ամեն դասակարգի խաւերում ընթերցանութեան
սէրը տարածելու նպատակով: Արժ. Գիւտ քահ.
Աղանեանցից ստացանք հետեւեալ պատասխանը.
« «Արձագանք»-ի խմբագրութիւնը թող է տալիս
ձեզ միմիայն արտատպել և առանձին գրքոյկնե-
րով հրատարակել այն վէպիկները, պատկերները,

կենսագրութիւնները և ճանապարհորդական տը-
պաւորութիւնները, որոնք անստորագիր են և
պատկանում են խմբագրութեան, իսկ նոքա, ո-
րոնք ստորագրութիւն են կրում, նոցա համար
պէտք է հեղինակներից թոյլտուութիւն խնդրել»:
Անմիջապէս դիմեցինք Փօթի պ. Ալէքսանդր Զա-
քարեանցին թոյլ տալու «Շիրվանի կոյս» վէպիկն
առանձին հրատարակելու արտօնութիւնը, որ և
կատարեց մեր խնդիրը: Ուստի յայտնում ենք
մեր անկեղծ շնորհակալութիւնը յարգելի հե-
ղինակին:

Գ. Փ.

22

ՇԻՐՎԱՆԻ ԿՈՅՍԸ

Էեռու հարաւում, այն չնաշխարհիկ աշ-
խարհում, ուր Աստուծոյ աթոռն է դրած,
ուր ջինջ կապուտակ երկնքում վառւում է
պայծառ, և ոսկի արեւը, ժպտալով երկրին,
ստիպում է նորան արտադրել ձիթենի, կիտ-
րոն ու նարինջ: Այն երջանիկ աշխարհում,
ուր չկայ բքաբեր ձմեռ, չկայ և ցուրտ ա-
շուն, այլ տիրապետում է մշտադալար գա-
րուն և ուր ջէննաթի կենսաբեր շունչը, փը-
չելով երկրին, ծածկում է սարեր ու ձորեր,
դաշտեր ու հովիտներ վարդի ճապուկ թփե-
րով, որոնց վրայ սիրահար սոխակը գիշերա-
յին լուութեան մէջ իր սիրային մեղեդիներ-
ը թնդացնելով վառում, բորբոքում է սիրոյ
կրակով երիտասարդ ջիգիթի և սեւաչեայ կոյ-
սի սիրտը: Այն հարուստ աշխարհում, ուր
հարուստ բնութիւնն իւր լիառատ պարգե-
ներն է սփռում դարերի միջոցում զուրանի
օրօրով թմրած ժողովրդին, բռնակալների կա-
մայականութիւնը դեռ տիրապետում է օրէն-

քի վրայ և մեծ մարգարէի հաւատացեալ ժողովուրդը, երազելով ջէննաթի հուրինները, համբերութեամբ տանում է բռնութեան լուծը: Չնաշխարհիկ հուրինների այն հմայական աշխարհում, ուր արևելքի վառվռունները աղջկերքը սևորակ աչքերով, ծիածանի ունքերով, հոլանի թևերով և նազելի հասակով սէր են ներշնչում արևելքի սիրաբորբոք զաւակներին, ուր սիրատենչ հարեմները կրակոտ նայուածքով, սիրատապ շրթթունքներով, կիսամերկ մարմնով գրգռում, բորբոքում են և հարեմի զառամեալ բռնակալի ցամաքած արիւնը և երիտասարդ իշխանի դեռ վառ սիրատոջոր սիրտը... Բանաստեղծների և բռնակալների պատմական աշխարհում, զառամեալ գլուխը յենած դողդոջուն ձեռներին, նստած է իր կախարդական պալատում արևելքի մեծ թագաւորը, Իրանի շահին-շահը: Տխուր է արքայից արքան և մարած է նրա աչքերի կրակը: Նրա առաջ լուռ ուրուականների նման շարուած են հլու հնազանդ ստրուկները, պատրաստ ամեն մի րոպէ կատարելու իրանց արքայի հրամանները, բայց տխուր է նա և տխրութեան ամպով է պատած նրա ճակատը: Սնողոք ժամանակի հոսանքը չէ խնայել և արքայից արքային: Նա

ծածկել է նրա գլուխը սպիտակ ալիքներով և ճակատը ծերութեան խորշոմներով: Տարինների երկար շարքերը դրօշմել են նրա դէմքի վրայ զառամութեան անջնջելի կնիքը: Մեծ արքան զգում է իր ուսերի վրայ տարիների ծանրութիւնը, և վշտով լցւում է նրա սիրտը: Նա լիշում է իր անցեալը, իր հեռու բախտաւոր անցեալը, երբ նրա երակների մէջ ևս եռում էր երիտասարդական արիւնը, երբ նրա համար արքայական գահից և գալիսոնից թանգ էր չքնաղ կոյսի սիրատենչ նայուածքը, երբ նա սիրում էր պատերազմը և քաղցը էր նրա համար գէնքի շաչիւնը...: Բայց անցան այնուհետև տարիներ, երկար ձիգ տարիներ, հանգաւ նրա եռանդը, մարեց նրա սրտի կրակը. ոչ պատերազմի աղմուկը և ոչ սիրուն կոյսի հրատապ նայուածքը չեն ազդում այժմ նրա զառամեալ սրտի վրայ: Նա մոռացել է մինչև անգամ իր հարեմը, ուր աշխարհի ամեն կողմերից ժողոված են չնաշխարհիկ գեղեցկուհիներ: Նրա սառած արիւնը այլ ևս չէ եռում, երբ կիսամերկ հարեմների խումբը, փայլելով ջէննաթի հուրինների գեղեցկութեամբ, թափում էր նրա առաջ սիրոյ բոլոր հրաշալիները:

Նրան չէ գրաւում այժմ ոչ թափանցիկ

շղարշի տակից ալիքանման ծածանուող մերկ կուսական մարմինը, ոչ մարգարիտներով ու թանկագին քարերով զարդարուած հրաշագեղ կուրծքը, որի վրայ փայլում են ջէննաթից քաղած զոյգ շամամները, ոչ սպիտակ ձիւնանման մարմարոնեայ պարանոցն ու ուսերը և ոչ սևորակ զգայուն աչքերից ցայտող կրակը: Տխուր է մեծ շահին-շահը և սոսկալի մտա-տանջութիւնները կենաց վերջին օրերում հանգիստ չեն տալիս նրան: Նա զգում է իր ոյժերի սպառուելը, զգում է, որ շուտով պիտի ներկայանայ մեծ Ալլահի աթուռի առաջ և ոգևորութեամբ մրմնջում է ղուրանի երգերը, բայց և սրբազան երգերը չեն փարատում նրա ճակատից տխրութեան ամպերը, չեն սփոփում նրա սրտի դառնութիւնը: Նրա երևակայութիւնը հակառակ նրա կամաց պարզում է նրա առաջ անցեալի դառն յիշատակները:

Նա տեսնում է արեան գետակներ, տեսնում է իր ձեռքով թափած իր հարազատների, ազգականների, մերձաւորների արիւնը, որի միջից լողալով նա գահ է բարձրանում. նա տեսնում է խողիսողուող ժողովուրդներ, տեսնում է իր ոտքի տակ զառամեալ թազաւորի, իր հարազատ ծնողի արիւնաթաթախ

գլուխը, լսում է ծերերի, մանուկների, անմեղ կոյսերի ցաւալի լացն ու կոծը, կրակի բոցի մէջ կենդանի այրուող բազմութեան սրտածմլիկ աղաղակները, տեսնում է աւերակ դարձած քաղաքներ, գիւղեր, աւաններ և ահա արեան այդ հոսանքի, կրակի և ծուխի միջից, աւերակների տակից բարձրանում են ահուելի ուռուականներ. նրանք հոգի և մարմին են ստանում, հարազատների, ազգականների, անմեղ զոհերի կերպարանք են առնում, և ահա նրա գահի պատուանդանները կրկին արիւնով են ներկւում. նա տեսնում է իր թագն ու գայիսոնը արեան մէջ թաթախուած, իր սպիտակ ալիքները կարմիր ներկուած, տեսնում է իր պալատն ու ապարանքները կրակով ու ծխով պատած, իր կանայքը, հարսերը, աղջկերքը խաթամուծից լլկուելիս. լըսում է հայհոյանք, անէծքներ... Հեռու, հեռու անտանելի մտածմունքներ... Բայց ահա նրա աչքի առաջ պարզւում է իր լայնածաւալ տէրութիւնը, անսահման տարածութեամբ նա փռւում է հիւսիսից հարաւ, արեւելքից արեւմուտ: Անթիւ, անհամար ազգեր ու ժողովուրդներ են բնակւում նրա գահի պատուանդանների տակ. նա ունի հլու ստրուկներ, հնազանդ հպատակներ, որոնք պաշտում

են նրան և դողում են նրանից, նա ունի անհամար զօրքեր, քաջ զօրապետներ..., և ահա նրա երևակայութիւնը բացում է նրա առաջ Ինդուսի հարուստ ասիերը, Պաշմիրի դրախտանման հովիտները, Մահաբի լիառատ դաշտերը, հարուստ Հնդկաստանը և աւելի հեռու սրբազան Գանգէսի միւս կողմը առասպելական Չինաստանը, ամբողջ Ասիան իր կախարդական հրաշալիքներով և ջէննաթի հուրիններով:

Նա լսում է փողերի ձայնը, պատերազմի աղաղակը, զէնքերի շաչիւնը, դէպի փառք, դէպի յաղթութիւն է քշում նա իր զօրքերին, տեսնում է ազգեր, ժողովուրդներ իր ոտքերի տակ սողալիս, տեսնում է հարուստ գաւառներ, բազմամարդ քաղաքներ աւերակ դարձած, սրի, կրակի ճարակ եղած... Եւ ունի է կրկին սառած արիւնը երակներում, և նրա աչքերը փայլում են բաւականութեամբ... Բայց յանկարծ յաղթութեան փառքի միջից նա իր նայուածքն է դարձնում դէպի հեռու հիւսիս, այնտեղ հզօր անյաղթ արծիւը անթարթ աչքով դիտում է նրա իւրաքանչիւր մի շարժումը և կարծես պատրաստում է իր զարհուրելի չանգերը միտել նրա զառամեալ կրծքի մէջ... Տխուր է արքայից արքան

և մռայլ մտքերը կենաց վերջին օրերում հանգիստ չեն տալիս նրան: Բայց մեծ է Ալլահը և Մահամէտը նրա մարգարէն է: Անհասկանալի է ճակատագրի խաղը. երբեմն նոյն իսկ կենաց վերջին օրերում մարդս մոռանում է իր սիրտը կրծող վշտերը, տարիների ծանրութիւնն և շատ ժամանակ զառամեալ ծերուկը իր վերջին վայրկեանին սկսում է ուրախ ժպտալ կեանքին:

Այդպէս մի օր զառամեալ թագաւորի քաջ զօրապետները աւետեցին նրան նրա քաջ զօրքերի փառաւոր յաղթութիւնը. Շիրվանի քաղաքների և գիւղերի աւերակ դառնալը, և իբրև յաղթութեան փառք ընծայ բերին նրան Շիրվանի չքնաղ գեղեցկուհուն, նազելի անման Թագուհուն: Եւ այն օրից, երբ հրեշտականման հայուհին ոտ դրաւ հարեմի սեմից, ալւոր բռնակալը, կարծես, նոր կեանք ստացաւ: Թագուհու հրեշտակային դէմքը, նրա յաւերժահարսի հասակը, սև վառվառն աչքերի մէջ փայլող անմեղութիւնը վառեցին կրկին բռնակալի սիրտը երիտասարդական խանդով: Յիշում է այժմ նա իր երիտասարդական քաղցր օրերը, երբ նա իր անզուսպ եռանդով վառում, բորբոքում էր չքնաղ ստրկուհիների սիրտը: Սիրում է այժմ հզօր շահին-շահը այ-

ցելել իր հարեմը: Այստեղ, ինչպէս գարնանային պտուտակը Հնդկաստանի կիսարիսի շուրջը, շրջապատում են նրան կենդանի օղակով հարեմի նազելի գեղեցկուհիները: Աշխարհի ամեն կողմերից չքնաղ հուրինները խմբուած են արևելքի մեծ թագաւորի հարեմի ոսկեզօծ պատերի մէջ: Այստեղ մեղկութեան և հեշտութեան մէջ կաշկանդուած է վայրենի Գաղստանի ազատ գեղեցկուհին, այստեղ մասն է հանած իր չնաշխարհիկ հուրիններից Վրաստանը, այստեղ հեռու իր սիրուն հայրենիքից տոջորուում է ջէյրանի քաղցր նայուածքով աննման Իմէրեթուհին և շէկ մազերով, ջինջ կապուտակ աչերով, բարակ մէջքով հիւսիսի նազելի գուստրը, այստեղ ընծայ է ուղարկուած իր թարմ, թխագէմ աղջկան լեռնային Հայաստանը, այստեղ են և Գալիլիայի երկրի և Լիտուրգիայի ոսկեայ դաշտերի և Նումիդիայի վառվռուն սիրատենջ կոյսերը: Հարեմի ոսկեզօծ պատերի մէջ, սիրոյ մեղկութեան, հեշտութեան մթնոլորտում կաշկանդուած չքնաղ գեղեցկուհիները մոռացել են իրանց ընտանիքը և հայրենիքը: Այստեղ թագաւորում է սէր, հեշտութիւն, անհոգութիւն:

Այստեղ առաւօտից մինչև երեկոյ չէ լը-

ռում երգեհոնի ձայնը և սեւաչեայ կրակոտ հուրին գինու փրփրադէզ բաժակը ձեռին պարում է ղաւալի նուագի տակ: Նա պտտում է և նրա կիսամերկ շնորհալի մարմնի ձևերը հեշտօրէն նկատուելով գրգռում, բորբոքում են հարեմի պետին. նա կանգնում է և թափանցիկ շղարշը ալիքանման սահելով նրա մարմնի վրայից ընկնում է նրա ոտքերի տակ, մերկացնելով նրա աննման կուրծքը, հրաշակերտ ուսերը, յաւերժահարսի հասակը... Նազելով, ժպտալով նա նայում է իր տիրոջը և նորաբաց կոկոնի նման շրթունքները թրջելով գինու բաժակում, երգում է.

Նայիր այստեղ, Իրանի իշխան,
Տես այդ նազելի հասակը:
Ինձի նայիր, իմ սիրական,
Իմ աչքիս լոյս, կեանքիս փառքը:
Ինձի նայիր, իմ ցանկալի,
Վրաց աշխարհի չքնաղ վարդը
Սէր է հայցում, սէր տենչալի:
Այստեղ նայիր, Իրանի զարդը,
Տես ջէննաթում դու կգտնես
Այդպէս իրան, այդպէս մազեր:
Գրկիր ինձի, աչքիս լոյսը,
Տես ինչպիսի ուրախ ժամեր
Քեզ կնծայէ սիրուն կոյսը:

Սև մազերով, սև ծամերով
 Լոյս ցերեկով քեզ կծածկէ,
 Եւ իր կրծքին պինդ սեղմելով,
 Սիրոյ գաղտնիքն քեզ կպարզէ:

Բայց հարեմի այդ վավաշոտ գեղեցկու-
 հիների մէջ չէ փայլում իր կուսական ան-
 մեղութեամբ Թագուհին, Շիրվանի պայծառ
 աստղը: Տխուր է մեծ արքան և վիշտ է փայ-
 լում նրա աչքերում. նա անուշադիր է իր
 զգայուն, վավաշոտ հարեմների փայփայանք-
 ներին, նրա միտքը գրաւած է Թագուհին և
 միայն նրա համար է բաբախում նրա գա-
 ռամեալ սիրտը: Բայց Թագուհին չէ կարող
 սիրել իր բռնակալին, նրա ազատ հոգին չէ
 հաշտում հարեմական զեղիս կեանքի հետ.
 նրան չէ գրաւում ոչ հարեմի զեղխութիւնը,
 ոչ ոսկու և թանկագին քարերի փայլը, ոչ
 ճոխ համադամ սեղանը:

Ամբողջ օրերով նա միայնակ փակուած է
 իր սենեակում. այնտեղ միայն կարողանում է
 մտքով սլանալ հեռու, հեռու դէպի իր տեն-
 չալի հայրենիքը. այնտեղից միայն նրա հոգին
 սաւառնում է խաղաղ հանգիստ բնութեան
 զրկում, ուր նա ծանօթ էր քաղցր ազատու-
 թեան հետ, ուր նա անցուցել է իր մանուկ
 հասակի անմեղ անհոգ տարիները իր հասա-

կակիցների, քոյրերի և եղբայրների շրջանում,
 ուր առաջին անգամ նա լսեց սիրոյ քաղցր շշու-
 կը և ուր արիւնարբու թշնամին աւերեց նրա
 հայրենական տունը, գերեց, սպանեց նրա եղ-
 բայրներին, քոյրերին: Կանգնած է Թագուհին իր
 ճոխ սենեակի բաց պատուհանի առաջ և նրա
 հանգէպ տարածում է հարեմի կախարդական
 այգին, որի մէջ ծաղկած եղեմական ծաղիկ-
 ները անմահական բուրմունքով լցնում են
 օդը: Նա բոլորովին թաթախուած է լուսնի
 աղօտ լոյսով. նա լսում է, ինչպէս սիրահար
 սոխակը, պարտիզի վարդի թփի վրայ նստած,
 իր զմայլելի երգն է երգում, և նրա երգի
 ձայնից լուռ է բնութիւնը և պարզ կապու-
 տակ երկնքում փայլող միլիոնաւոր աստղերն
 են կարծես հրճւում: Մեղմ գիշերային զե-
 փիւռը, սահելով չինարների վրայից, քաղցրու-
 թեամբ խաղում է նրա գիսակների հետ և
 նրա միտքը յափշտակելով տանում է հեռու,
 հեռու: Եւ նրա աչքի առաջ սլարգւում է
 խաղաղ հայրենական գիւղը իր բոլոր գեղեց-
 կութեամբ: Նա տեսնում է իր ծնօլներին,
 սիրալիր մօրը, քոյրերին, եղբայրը, ընկերու-
 հիներին, տեսնում է այն գաշտերը, մարգերը,
 հովիտները, բլուրները, որոնց վրայ մանուկ
 հասակում նա այնքան սիրում էր վազվզել,

խաղալ, հրճուել և ուր յետոյ սրտատրոփ
ականջ էր դնում սիրոյ ձայնին. տեսնում է
և իր անմոռանալի Սանդրօին... Մուլթ գի-
շեր էր, նրա պսակի գիշերը, քահանան վեր-
ջացրել էր պսակի արարողութիւնը, նա յա-
ւիտենական սուրբ կապով պիտի միանար իր
սրտի սիրածի հետ, երբ սարսափելի աղաղակն
ու լացը տիրեց ամբողջ գիւղին, կատաղի
սարվազները, թափուելով սուրբ տաճարի մէջ,
խլեցին նրան իր սիրածի գրկից... Նա տես-
նում է նրա վեհ գէմքը, տեսնում է ինչպէս
նա թուլացած արիւնաքամ ընկնում է թշնա-
միների սրերի հարուածի տակ, իր վերջին սի-
րալիը նայուածքը ուղղելով իրան... Յիշում է
այդ ամենը Թագուհին և նրա սիրտը կծկծում
է դառն կսկիծով, հոգին լցւում է ատելու-
թեամբ դէպի իր բռնակալները և արտասուքի
կաթիլները մարգարտեայ շիթերի նման գլոր-
ւում են նրա աչքերից:

— Ինչք է լալիս չքնաղ Շիրվանի վարդը,
լսում է նա յանկարծ իր ետև անհոգ, որպէս
թիթեռնիկ, մատաղ հարեմի ձայնը, — թող ու-
րախանայ, թող ժպտայ նա, արքայից արքան
արժան է համարել ուղղել նրան իր օիրոյ ճառա-
գայթները և ցանկանում է երջանկացնել նրան
իր սիրոյ ջերմութեամբ: Սթափուում է Թագուհին

իր երազներից, անցեալի դառն յիշողութիւննե-
րին տեղիք է տալիս անհու սարսափը, բըռ-
նակալի առաջ դուրս գալու երկիւղը: Սրբում
է նա իր աչքերի արցունքը և գլխակոր հե-
տևում սիրուն հարեմին: Տխուր է զառամեալ
բռնակալը և դառն մտքերը ալեկոծում են
նրա սիրտը: Նա սիրում է և զգում է, որ
այդ սիրոյ, իր այդ վերջին սիրոյ մէջն է կա-
յանում իր կեանքի բոլոր գոյութիւնը, որ
այլ ևս անհնար է նրան ապրել առանց
այդ սիրոյ: Այն օրից, երբ առաջին ան-
գամ նա տեսաւ Թագուհու հրեշտակային
գէմքը, երբ նրա երկնային նայուածքը թա-
փանցեց նրա սիրտը, նա մի ըոպէ անգամ չէ
կարողանում մոռանալ նրան: Գիշեր թէ ցե-
րեկ, երազի թէ արթնութեան մէջ նրա ա-
ռաջ պատկերանում է չքնաղ կոյսի աննման
գէմքը: Անիծում է արքայից արքան այն օրը,
երբ առաջին անգամ տեսաւ այդ վեհ գե-
ղեցկութիւնը, որը անզգայ է մնում նրա սի-
րատենչ աղերսանքներին:

Նրա համար անտանելի է այժմ արքա-
յական ծիրանին, նա զգում է, որ արժան չէ
այսուհետև մարգարէի փոխանորդը կոչուելու,
որ նա Իսլամի զաւակ չէ, նա զինուոր չէ և
ոչ թագաւոր, որովհետև իր արքայական վե-

Հուլիսնը ստորացրեց մի կոյսի գեղեցկու-
թեան առաջ: Չէ, Թագուհին պիտի սիրէ
նրան կամ դահճի սուրը պիտի ներկուի նրա
արիւնով... բայց մթթէ նա կարող է սպանել
տալ այդ անմեղ ծաղիկը, ջէննաթի այդ սի-
րուն վարդը, սպանել տալ նրան, քանի որ
նրա մի նայուածքը երկնային երջանկութեամբ
է լցնում նրա զառամեալ սիրտը: Նայում է
ծեր թագաւորը, սիրտվառ նայուածքով նա-
յում է այն դռան, որտեղից պիտի երևայ
նրա ծերութեան օրերի միակ մխիթարանքը,
որտեղից պիտի ծագէ նրա համար կենսատու
արևը: Երևում է Թագուհին: Գեղեցիկ է նա,
աւելի գեղեցիկ քան ջէննաթի Հուրինները:
սիրուն է նա, ինչպէս գարնան առաջին օրը,
թարմ է, ինչպէս Կաշիմիրի դրախտային օրը,
ինչպէս Գուլիստանի նորաբաց վարդը: Նրա
գեղեցկութիւնը վառւում է կուսական կարմ-
րութեամբ, մատաղ կուրծքը տատանւում է
ովկիանոսի ալիքների նման, իսկ նայուածքը
փայլում է հրեշտակային անմեղութեամբ:
Ինչպէս արևի պայծառ ճառագայթները ա-
ռաւօտեան մառախուղի միջից, այնպէս նրա
սևորակ աչքերը փայլում են երկար թերթե-
րունքների տակից, շքեղ է նրա հասակը ծո-
վի ալիքներից դուրս եկած յաւերժահարսի

Հասակի նման, նրա շրթունքները նմանւում
են նորաբաց կոկոնի և գիշերային մթու-
թեամբ են փայլում նրա ծիծեռնակի թեքե-
րի նման սև երկար ծամերը:

Ապշանքով և զմայլմամբ նայում է նրան
աշխարհի իշխանը. սէր, պաղատանք, աղեր-
սանք, հրաման է արտայայտում նրա նայու-
ածքը: Մոռացած ամբողջ աշխարհը, մոռա-
ցած իւր արքայական վեհութիւնը և միայն
սիրոյ գորովով զգացուած, նա կորացնում է
իր ալեւոր գլուխը կոյսի ոտքերի տակ: Թոշ-
նում է չքնաղ կոյսը առաւօտեան արշալոյսի
նման և արտասուքի դառն կաթիլները պատ-
րաստ են ցայտելու նրա աչքերից: Ինչքան
մեծ, ինչքան գերագոյն է սիրոյ իշխանու-
թիւնը, որ այնտեղ ևս, ուր օրէնքը կաշ-
կանդած է կնոջ ստրկութեան շղթայով,
ուր տղամարդը միահեծան տէր է համար-
ւում կնոջ կեանքի և մահուան վրայ, այն-
տեղ ևս գահի հզօր պետը իր հպարտ
գլուխն է խոնարհեցնում մի թոյլ, անպաշտ-
պան կոյսի առաջ:

— Նայիր ինձ, իմ հրեշտակս, — աղերսում
է ալեւոր բռնակալը ծնկի վրայ ընկած, — նա-
յիր ինձ իմ հոգոյս աստղը և մեղմիր քո քաղ-
ցրը Ժպիտով իմ հոգեկան տանջանքներս:

Երբեք եմ ես Ալլահի անունով, որ մեծ մարգարէն կը թողնէր իր ջէննաթը և կիջնէր մեր այս վշտերով լիքը աշխարհը՝ միայն մի վայրկեան քո հրեշտակային ժպիտդ վայելելու:

— Մեծ թագաւոր, — պատասխանում է թագուհին վրդովուած ձայնով, — աղերսում եմ քեզ, թող ինձ, մի վրդովիւր իմ սրտի դառն վշտերը, դու գիտես, ես չեմ կարող սիրել քեզ: Կար ժամանակ, որ ես ևս սիրում էի, որ իմ սիրտս էլ բաց էր սիրոյ համար, բայց այնուհետև մեռաւ իմ սիրտս, ես իմ սէրս, իմ յօսերս թաղեցի այնտեղ, իմ թշուառ հայրենեաց աւերակների տակ:

— Սիրիւր ինձ այժմ, և ես կը վերադարձնեմ քեզ քո հայրենիքդ. սիրիւր ինձ, և քեզ կը տամ աշխարհի բոլոր հարստութիւնները:

— Աշխարհի բոլոր հարստութիւնները չեն կարող փարատել աւերակ դարձած հայրենիքի կսկիծները, չեն կարող վերադարձնել ինձ իմ սիրելիներս, իմ քոյրերս ու եղբայրներս:

— Ես քեզ կը տամ այն ամենը, ինչով կեանքը զեղեցիկ է համարւում, քո ոտքիդ տակ կը զննեմ իմ գահս և թագս:

— Արքայական գահից և թագից ես վերադասում եմ մահը:

— Քեզ համար ես ոտի տակ կը տամ Ալլահի պատուէրը, կը ուրանամ Իսլամին և արևելքի հպարտ թագուհին կը շինեմ քեզ:

— Տէր արքայ, խնայիւր ինձ, հրամայիւր քո դահիճներիդ վերջ տալ իմ կեանքիս, նա ատելի է ինձ:

Դողում է բարկութիւնից արքայից արքան:

— Անգութ աղջիկ, — գոռում է նա, — դու չես ուզում անսալ իմ աղաչանքին, բայց գիտես, ինչ կարող է անել քեզ Իրանի արքան, դժոխային տանջանքներով նահատակել կը տայ նա քեզ, երկնքի թռչունների և վայրենի գազանների կերակուր կը դարձնէ քո մարմինդ, մաս մաս յօշաքաղել կը տայ քո անգամներդ:

— Արա՛, ինչ որ կարող ես, միայն ազատիւր ինձ քեզանից, արիւնարբու բռնակալ:

Եւ երկար այնուհետև ծեր բռնակալը քնկած անմեղ կոյսի ոտքերը՝ աղաչում, պաղատում, աղերսում կամ վախեցնում էր նրան: Անյողգողդ է քաջ կոյսը. նա չէ անսում ոչ նրա աղերսանքին և ոչ հրամանին:

Հեռու հիւսիսում, որպէս յաւիտենական պահապան այն նեղ շաւիղի, որը տանում է գէպի Կովկասեան վիթխարի ձիւնապատ սարերը, հարթ, տափարակ դաշտի վրայ բարձրանում է Ֆիթ-Դաղը:

Բարձր է Ֆիթ-Դաղը և մինչև այսօր ոչ ոք չէ համարձակուել չափել նրա բարձրութիւնը: Յաւիտենական ձիւնով է պատած նրա ամպերի մէջ անյայտացող կատարը: Գեղեցիկ է Ֆիթ-Դաղը երբ իր ձիւնապատ գագաթով ամենից առաջ ժպտում է առաւօտեան արշալոյսին, աւելի գեղեցիկ է նա, երբ արեգակի վերջին ճառագայթները երեկոյեան պահուն ոսկեգօծելով նրա կատարը, խաղում են նրա մշտնջենական ձիւնի կոյտերի հետ: Ամբողջ աշխարհը թաղուած է մթութեան մէջ և միայն Ֆիթ-Դաղի գագաթն է վառուում այդ ժամանակ շողշողուն լոյսով: Արևը սիրում է նրան, առաւօտեան առաջին ողջոյնը նրան է տալիս և ամենից յետոյ է նրանից անջատուում: Մութ խորխորատներով, կատաղի առուակներով է պատած Ֆիթ-Դաղը և նրա շուրջը միայն սրաթռիչ արծիւներն են շրջան կազմում: Նրա կրծքին կպած է այն կախարդական ամրոցը, որը Իրանի մեծ շահին-շահը շինել տուեց Շիրվանի կոյսի հա-

մար: Բարձր ատամնաւոր պարիսպները շրջապատում են նրան և արքայից արքայի վախից՝ թռչունը իր թռերով չէ թռչում այդ ամրոցի վրայից, օձը իր փորով չէ համարձակում սողալ նրա պարիսպների տակ: Այստեղ փակուած է Թագուհին: Այլևոր բռնաւորը շինել տուեց այդ ամրոցը նրա համար, որպէս զի հայրենեաց տեսքով կարողանայ սփոփել նրան և գրաւել նրա սիրտը: Այս ամրոցի պատահանից նա կարող է տեսնել ամբողջ Շիրվանը նրա քաղաքներով, գիւղերով, աւաններով: Ահա այնտեղ հովտի մէջ կարելի է տեսնել Հին քաղաքը իր մզկիթներով, բարձր մեհարէներով, այգիներով և հին խաների շիրմներով: Ահա և այնտեղ դէպի հարաւ բարձրաւանդակի վրայ, շրջապատուած վիթխարի ծառերով, նկարւում է Ս. Ստեփաննոսի վանքը իր խարխուլ գմբէթով, ահա և նրա ստորոտում տաւաճուող գիւղը իր այրուած խըրճիթներով, ահա և նրան շրջապատող անտառները, դաշտերը, բլրակները... Իսկ Հեռու, Հեռու հորիզոնի վրայ նկատուում են ծանօթ լեռնաշղթաները, ահա և կատաղի Փիրսահաթը, որ մռնչալով, ֆշֆշալով, սարերը կտրատելով առաջ է վազում... բայց ինչո՞ւ կարօտեալ հայրենիքի տեսքը ճմլում է երիտա-

սարգ կոյսի սիրտը, ինչո՞ւ արցունքը այդպէս առատօրէն վազում է նրա աչքերից:

— Ինչո՞ւ ես լալիս, իմ աննման հրեշտակըս, — շշնջում է այդ միջոցին նրա մօտ կանգնած Իրանի ալեւոր արքան, — ինչո՞ւ ես ուռգում քո երկնային աչքերդ աղի արցունքով. տեսնում ես, ես ընծայում եմ քեզ այդ կախարդական աշխարհը, որ տարածւում է քո ոտքիդ տակը, ես տալիս եմ քեզ քո հայրենիքդ և փոխարէնը միայն քո սէրդ եմ հայցում:

— Թո՛ղ ինձ, մեծ արքայ, — մրմնջում է տարաբաղդ կոյսը՝ աչքերը արտասուքով լիքը, — ես չեմ կարող տալ քեզ այն, ինչ որ դու ես պահանջում, ես չեմ կարող սիրել քեզ. իմ սրտումս դու չես կարող գտնել սիրոյ ամենափոքր մի կայծ անգամ, նա լիքն է վշտերով, որ չէ կարող փարատել մինչև անգամ թշուառ հայրենեաց անմխիթար տեսքը. այստեղ ես աւելի շուտ եմ լսում իմ տարաբաղդ հայրենակիցների հառաչանքը, այստեղից ես տեսնում եմ իմ հայրենի գիւղի հրդեհը, տեսնում եմ իմ ծնողներին, հարազատներին կրակի մէջ խորովուիլը, լսում եմ նրանց ցաւալի ձայնը և այդ յօշոտում է իմ սիրտս, թունաւորում է իմ հոգիս: Ձէ, արքայ, ես չեմ կա-

րող քեզ սիրել, մոռացիր և դու ինձ, սիրի՛ր և դու ուրիշին, քո հարեմդ լիքն է գեղեցկուհիներով:

— Մոռանամ քեզ, — բացականչում է բռնակալը, — բայց մի՞թէ կարող եմ քեզ մոռանալ. ես աւելի շուտ կը մոռանամ իմ հոգիս քան քեզ: Ձէ, իմ աննման հրեշտակս, ես չեմ կարող մոռանալ քեզ, դու գեղեցիկ ես ջէննաթի հուրիններից, քեզ մօտ չէ կարող ուրիշ գեղեցկուհի լինել, որովհետև միայն դու կարողացար վառել իմ սրտիս հանգած կրակը, դու միայն ջերմացրիր իմ երակներին սառած արիւնը, ո՛չ, դու պիտի սիրես ինձ, այդ է պահանջում ճակատագիրը:

— Ճակատագիրը այդ չէ կարող պահանջել, քսնի որ դու իմ հայրենեաց անգուլթ թշնամին, նրա դահիճն ես:

— Թագուհի, իմ աննման Թագուհի, քեզ և միայն քեզ Իրանի հզօր արքան կարող է ներել այդ խօսքերը, տեսնո՞ւմ ես, ես քո սիրոյ առաջ մոռանում եմ իմ արքայական վեհութիւնս, տեսնո՞ւմ ես, արքայից արքան իր ալեւոր գլուխը քո ոտքիդ է խոնարհեցնում, միլիօնների տէրը, որից ամբողջ աշխարհն է սարսում, քո ծնկներդ է համբուրում, խղճա՛

նրան, երկնային հրեշտակ, նա պատրաստ է մինչև անգամ քո սիրոյդ համար մոռանալ իր կրօնը, ընդունել Քրիստոսի խաչը:

Բայց անյողգողդ է կոյսի սիրտը, նա անգգայ է բռնակալի աղերսանքին:

— Իմացիր, արքայ, — ասում է նա, — որ այն սարսափելի գիշերը, երբ քո արիւնախում գինուորները լափշտակեցին ինձ իմ Սանդրօիս գրկից, ես նրա սառն դիակի վրայ երգուեցի երբէք ոչ ոքի չպատկանել և իմացիր այժմ, որ աշխարհի ոչ մի տանջանք չէ կարող ստիպել ինձ դժբեկ երգումս:

— Զգուշացիր, Թագուհի, այն, ինչ որ ներում է սիրող սիրտը, թագաւորը չէ կարող ներել:

— Եւ մի ներիւ, անհոգի բռնակալ, հրամայիր, թող յօշոտեն մարմինս, ես ուրախութեամբ կը գնամ մահի առաջ, այնտեղ երկընքում սպասում է ինձ իմ Սանդրօն:

Դողում է բարկութիւնից մեծ արքան և արիւնով են լցւում նրա աչքերը:

— Դէհ գնա՛ այժմ քո Սանդրօիդ մօտ, — գոռում է նա և նշան է տալիս ձեռովը: Ստրուկները դուրս են բերում նրան սենեակից և մի ժամից վարագոյրը ծածկում է օ-

տաբի աչքից Թագուհու կուսական գաղտնիքը և միայն Ֆիթ-Ռադի ապառաժները և երկնքի փայլուն աստղերը կարող են պարզել այդ գաղտնիքը...

Տխուր է արքայից արքան և նրա դէմքը պատած է տխրութեան ամպով: Նրա սիրտը ճմլւում է, երբ նա յիշում է Թագուհու նազելի դէմքը. ի զուր է աշխատում նա մոռանալ իր սիրտը կրծող վիշտը. թէ հարեմում, թէ խնջոյքում, թէ ուրախութեան ժամանակ ուրիշներին անտես, բայց միշտ նրա աչքի առաջ կանգնած է Թագուհու սառը դիակը, իր ցաւալի նայուածքը նրան ուղղած: Ոչ յաղթութեան ձայները, ոչ պատերազմի աղաղակը չեն կարողանում վանել նրա աչքի առաջից այդ դժգոյն դէմքը. ամեն տեղ թէ ցերեկ և թէ գիշեր, թէ քնած և թէ արթուն, թէ մզկիթում և թէ աղօթքի ժամանակ նա միշտ կանգնած է նրա առաջ և երբ ցաւագար, ուժասպառ նա ընկած էր մահուան անկողնի մէջ իր կենաց վերջին վայրկեանին, դողդոջուն ձեռներով նա սարսափելի ուրուականն էր ցոյց տալիս...

Ֆիթ-Ռադի արեւելեան ստորոտում, ժայռի տակ, մի տափարակ բարձրաւանդակի վրայ գտնւում է միայնակ մի գերեզման: Ժամա-

նակից սեւացած փայտեայ մի խաչ կանգնած
է այդ գերեզմանի վրայ: Հարցրէք անցնող
գիւղացուց, ո՛ւմն է այդ միայնակ գերեզ-
մանը, և նա ձեզ կը պատասխանէ «Շիրվանի
Կոյսինը»:



Don't forget to write to me
Don't forget to write to me

Don't forget to write to me
Don't forget to write to me

Don't forget to write to me

Don't forget to write to me
Don't forget to write to me
Don't forget to write to me

9254

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊԵԿ

Վաճառում է Թիֆլիսում Անտրոնական գրափա-
ճառանոցում և - հրատարակչի մօտ՝ Շարաձեի
տպարանում, Նիկ. փողոց, ա. 21:

12013

